№ 238 ԿԻՐԱԿԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31

1904

ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում կրկում են իմ մրագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакціи „Мшакъ".
Կամ Tiflis, Redaction „Mschak".
Տելեֆոն № 25.

Ամբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր առաջատողին 10 կոպէկ.
Տելեֆոն № 253.

№ 238 ԿԻՐԱԿԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31

Կիրակի, հոկտեմբերի 31-ին

ՆԵՐՍԷՍ ԴԱՒԹԵԱՆՑԻ

ժամվան տաբեդարձին, Վանքի մայր Եկեղեցում պատարագից յետոյ, ժամը 12-ին իր Կատարվի հոգեհանգիստ, որի մասին հանդուցեալի այրին՝ Սրբուհի Սմիկ Դաւթեանցը իր զաւակների հետ յայտնում է ազգականներին, բարեկամներին և հանդուցեալի յիշատակը յարգողներին։ 2—2

ՀՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն։ — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դաւաճանութիւն պիէսը հայոց բեմի վրա. Իսահակ Ալաճանեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հէյդար Շահ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

Պատերազմական բեմից դուրս վերջին օրերս տեղի ունեցան մի քանի դէպքեր, որոնք գրաւեցին իրանց վրա ընդհանուր ուշադրութիւն։

Միացեալ Նահանգների նախագահ Ռուզվելտը վերընտրվեց կրկին նախագահ Ամերիկայի մեծ հասարակապետութեան։ Այդ ընտրութիւնը ունի որոշ նշանակութիւն, որովհետև Ռուզվելտի քաղաքական ծրագիրը պարունակում է իր մէջ կարևոր կէտեր, որոնք կարող են ազդել ոչ միայն հասարակապետութեան ներքին, այլ և միջազգային խնդիրների վրա։ Ինչպէս յայտնի է՝ Ռուզվելտ յարուցեց Հաագայի խաղաղասիրական կոնֆերենցիայի նոր նիստ գումարելու հարցը, որը ներկայումս բանակցութեան առարկայ է պետութիւնների միջև։ Իբրև արձագանք այն դիտաւորութիւնների, որ ունի Ռուզվելտի կառավարութիւնը, կարող ենք յիշատակել նրա բռնած ներգործական դերը Թիւրքիայի գործերում։ Եւ առհասարակ չը պէտք է մոռանալ, որ Միացեալ Նահանգների կառավարութիւնը վերջին ժամանակներս ձգտում է որոշ դեր կատարել հաշտարարային քաղաքականութեան մէջ և ապահովել իր համար ազդեցութեան շրջաններ թէ Հեռաւոր Արևելքում և թէ ուրիշ տեղերում։

Ի միջի այլոց աւելորդ չենք համարում ընդգծել, որ Ամերիկայում գանվող հայերը, իբրև հասարակապետութեան քաղաքացիներ, նոյնպէս մասնակցեցին ընտրողական ժողովներում։ Հայկական ընտրողների մեծագոյն մասը պաշտպանում էր Ռուզվելտի թեկնածութիւնը։

Եւրոպական ցամաքում բաւական մեծ խօսակցութեան առարկայ դարձաւ այն անախորժ դէպքը, որ տեղի ունեցաւ Աւստրիայի Ինսբրուկ քաղաքում։ Հեռագիրները հաղորդեցին, որ այդ քաղաքում գերմանացիները յարձակվեցին իտալական ուսանողների վրա և դրանով բողոք յայտնեցին իտալական լեզուով դասախօսութիւնների դէմ հանդիսանում։ Ինչն է սակայն ընդհարումի պատճառը։ Անհայտ։ Աւստրիայում ներկայումս կան մօտ 800,000 հոգի իտալացիներ։ Վաղուց հարց էր յարուցված իտալացիների բարձր կրթութեան համար ֆակուլտետներ ունենալ։ Իտալացիները ցանկանում էին, որ այդ ֆակուլտետները բացվեն Տրիեստ քաղաքում. իսկ աւստրիական կառավարութիւնը, քաղաքական որոշ նրկատումներով, չէր ցանկանում Տրիեստում ունենալ իտալական բարձր կրթարան, ուստի համաձայնեց բանալ իտալական լեզուով դասախօսութիւններ Ինսբրուկի համալսարանում։ Ինսբրուկը գտնվում է Տիրոլի շրջանում, որտեղ ուժեղ է գերմանական տարրը։ Ինսբրուկում իտալական ֆակուլտէտ բանալը հաւանութիւն չէր գտնում ոչ իտալացիների և ոչ գերմանացիների կողմից։ Այնու ամենայնիւ իտալացիների մի որոշ թիւ ուսանող գրվեց իտալական ֆակուլտետում։ Գերմանացիները սկսեցին հալածել իտալական ուսանողներին և առաջ բերին այն անախորժ ընդհարումները, որոնց մասին յայտնեցին հեռագիրները։

Ֆրանսիայում պաշտօնական ընթացք է ստանում հոգևորականութեան իրաւունքների սահմանափակման ծրագիրը։ Ազգային ժողովի մեծամասնութիւնը հաշտաչքով է նայում կառավարութեան ձեռք առած միջոցներին. բայց վերջնական որոշումներ դեռ չէ տուել։

Մակեդոնական շրջանում սկսում են նորից նկատվել բարդութիւններ։ Թիւրքիան դժուարութիւններ է յարուցանում բոլգարական ուսուցիչների դէմ և նրանց մի մասը կալանաւորել է, առարկելով, որ նա նկատել է նրանց մէջ յեղափոխական գործունէութեան համար նախապատրաստութիւններ։ Միւս կողմից մի քանի տեղում երևացել են յունական խմբեր, որոնք յարձակումներ են գործում բոլգարական և սերբիական խմբերի վրա։ Եւրոպական ժանդարմերիան աշխատում է որոշ աստիճան բարեկարգութիւն մտցնել յուզված երկրում. բայց նա շատ թոյլ է լուրջ և ազդեցիկ գործ կատարելու համար։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ» ՊԻԷՍԸ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՎՐԱ

—

«Դաւաճանութիւն», պատմական լեգենդա հինգ գործողութեամբ, Իշխան Սումբատովի թարգմ. Ջ. Տէր-Գրիգորեանի։

Ամենից քիչ յարմարում է իշխ. Սումբատովի պէսային լեգենդա անունը։ Հեղինակը ազատ կարող էր կնքել իր գրաման «պատմական իրողութիւն» անունով։ Գուցէ նրանից է, որ նա սանձ չէ դրել իր երևակայութեանը և ստեղծել է մի ազգի գոյութեան ամենասոսկալի պայմաններ։ Բայց նա մոռացել է, որ այժմ ամենահատ զուսպ երևակայութիւնն անկարող է վերարտադրել այն զարհուրելի ողբերգութիւնը, որը կազմում էր վրաց ազգի գոյութիւնը մի շարք դարերի ընթացքում։ Գուցէ լաւ չը գիտէ իր երկրի անցեալը կամ չէ վստահանում ժամանակագիրներին։ «Իշխան—պատասխանում է արտասուք թափելով Անանուրի տանուտէր Անանիա Գլխան Քարթալինայի կառավարիչ հաւատափոխ դաւաճան Օթար-Բէգին—ձիերը բերել ենք, բայց աղջիկներ չը կան. այս տարի բոլոր գեղեցիկ աղջիկներին մեր գաւառում առևանգեցին Սուլէյմանի մարդիկը»։ (Նա վախում է ասել հրամանները. աղջիկներ հարկաւոր էին շահին, նրա պալատականներին ընծայ ուղարկելու համար)։ Մի՞թէ այս տեսակ երևոյթը լեգենդա էր Վրաստանի համար։

Կամ թէ հետևեալը։ Բռնակալ Սուլէյմանը ինչպէս փանատիկոս մուսուլման, չի կարողանում տանել եկեղեցական զանգակի ձայնը. և ինձ պատմեցին, որ մի աղքատ հահուդի (հրէայ) բռնվել էր խօլերայից. ոչ ոք չէր մոտենում. ամենքը փախել էին և հիւանդ հրէան մեռացել էր անօգնական և անտէր. Հէյդար-Շահը գնում է նրա մօտ, սկսում խնամել, դեղեր տալ, տրորել, շփել մարմինը և հրէան առողջանում է։ Քաղաքի մուշթէյիդը սաստիկ բարկացել էր Հէյդար-Շահի վրա, որ նա անհաւատ և մուռտատ ջնուղների հետ շփվելով, պղծում է իրան, բայց նա պատասխանել էր. «մի մոռացիր, մուշթէյիդ, որ Մուսան և Իսան (Մովսէսը և Յիսուսը) հրէաներից են գուրս եկել և Թօվրաթը (Աստուածաշունչը) հրէաների սուրբն է. հրէան նոյնպէս Ալլահի ստեղծածն է։

—Ախ, ես շատ վախենում եմ, որ Հէյդար-Շահը իր գլխին մի ցաւ կը բերէ,—ասաց հաջի Աբբասը—բայց ասա, խնդրեմ, հաջի Քէրիմ, զաւվարների մէջ հիւանդացածներ չը կան կամ ճանապարհին բռնվողներ չեղան։

—Ինչպէս չէ, տասը հոգի բռնվել էին Համադանում և ճանապարհին մեռան. ահա նրանց շորերը. տես, այնտեղ սուգ են անում. երևի մայրը, կինը կամ քոյրերն են։

Խօսակցութիւնը տեղի էր ունենում քաղաքի մուտքին կից դաշտի վրա, ուր զաւվարները իջել էին մի քիչ հանգստանալու և ընդառաջ եկողներին ընդունելու, որպէս զի ապա, հանդիսաւոր կերպով մուտք գործեն քաղաք։ Այդ դաշտի մի կողմում, մի խումբ կանայք նստած սուգ և շիւան էին բարձրացրել. նրանք լացում և ողբ էին կարդում ճանապարհին խօլերայից մեռածների հագուստների վրա, որ ընկերները բերել էին հետները՝ ազգականներին կամ ծնողներին յանձնելու։

Այդ միջոցին հեռում սաստիկ փոշի բարձրացաւ. մի քիչ յետոյ նկատվեց, որ մօտենում է ուղևորների մի նոր կարաւան։

—Համադանից կարաւան է գալիս, լսվեցին ձայներ։

Երբ կարաւանը մօտեցաւ, հաջի Աբբասը յանկարծ ուրախացած՝ գոչեց.

Տես, տես, հաջի Քէրիմ, անա ինքը Հէյդար-Շահը գալիս է։

Եւ երկուսն էլ սլացին ընդառաջ։

—Ինչպէ՞ս պատահեց, որ եկար, զարմացած հարցրեց հաջի Քէրիմը. ինձ ոչինչ չասացիր։

—Երբ դու գնացիր և ինձ լուր հասաւ, որ զաւվարներից ճանապարհին մեռնողներ են եղել, ես իսկոյն վախեցայ, որ նրանք խօլերա կը բերեն, կը տարածեն Թէհրանում. սիրտս չը դիմացաւ, երկիւղ կրեցի հաջի Աբբասի համար և շտապեցի գալ այստեղ։ Զգոյշ կացէք, մի մօտենաք հիւանդներին և նրանց հագուստներին, կարող էք վարակվել, որովհետև խօլերան եաթալը՝ պէս փոխադրական է։

Զաւվարների մէջ էր և մեր ծանօթ մէշէդի Քէրիմը, որ այժմ դարձել էր հաջի Քէրիմ, իսկ ընդառաջ գնացողների թուում կար և հաջի Աբբասը։

Երբ չաւուշը բարձրաձայն, երգեցողութեամբ արտասանեց և հաջի Քէրիմի անունը, սա իջաւ ձիից ու ամենից առաջ ողջագուրվեց հաջի Աբբասի հետ։

—Ես քեզ համար աղօթեցի, հաջի Աբբաս, մեծ Մարգարէի գերեզմանի և Քաաբայի նուիրական վէմի վրա, ասաց հաջի Քէրիմը։

—Ուխտդ ընդունելի և թող Ալլահը երկրորդ անգամ արժանացնէ քեզ այդ մեծ շնորհին, պատասխանեց հաջի Աբբասը, և ձեռքի բուռը դէմ արեց փոքրիկ սրուակին, որից հաջի Քէրիմը մի քանի կաթիլ նուիրական ջուր կաթեցրեց, որով հաջի Աբբասը շփեց երեսը և մօրուքը։

—Քեզ շատ և շատ բարևներ է անում Հէյդար-Շահը, ասաց հաջի Քէրիմը և քեզ համար մի քսակ արժաւ է ուղարկել։

—Որտե՞ղ տեսար նրան, ինչպէս է, առողջ է և ողջ, շտապով հարցրեց հաջի Աբբասը։

—Ես նրան տեսայ Համադանում, որտեղ խօլերան սկսել է կոտորածներ անել և Հէյդար-Շահը զարմանալի, հերոսական գործեր է կատարում։ Կարծես ես երևակայել, որ նա հարիւրաւոր մարդկանց ազատել է մահից.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԷՅԴԱՐ-ՇԱՀ

(Պարսկական կեանքից)

—

ՎԵՐՋ

X

Մեր պատմած դէպքերից յետոյ անցել էր մի ամբողջ տարի։

Մի գարնանային առաւօտ Թէհրանի փողոցների մէջ դարձեալ մեծ շարժումն և կենդանութիւն էր տիրում։ Այդ օր քաղաք պէտք է մտնէին զաւվարները (ուխտաւորները) և ժողովուրդը շտապում էր նրանց ընդառաջ, որը՝ օրհնեալ նուիրական հողից մի բուռ ընդունելու, որը իր սիրելուն, ազգականին, ընկերին ողջագուրելու։ Զաւվարների խումբը, գեղեցիկ երիվարների վրա նստած, դրօշակը ձեռքին բռնած, չաւուշների առաջնորդութեամբ, պատրաստվում էր մտնել քաղաք, ժողովրդի խուռն բազմութեան ուղեկցութեամբ։

—Սալաւաթ, սալաւաթ, թնդում էին աղաղակներ ամեն կողմից։

—Ձեր ուխտը ընդունելի լինի։

—Դուք ևս արժանանաք մեծ պատուին և շնորհին, պատասխանում էին զաւվարները։

Իշխան Սումբատովը գուցէ չէ էլ մտածել թէ ինչ սոսկալի իրողութիւնից, ոմանց համար անցեալ, ոմանց դեռ ընթացիկ, բաց է արել վարագոյրը։ Եւ կարծես դարերոր ժառանգական ներշնչումը գործել է նրա մէջ տաղանդի հետ և տուել է սոսկալի իրական տեսարաններ։ Այնքան բնական են և տիպիք նրա նկարագրած տեսարանները, որ միայն ականատեսը կարող է տալ։ Փոխեցէք նրա դրամայի մէջ անունները և ազատ կարող էք փոխադրել նրա գործողութեան տեղը իւրաքանչիւր մի վայր փոքր Ասիայում, շատ գործողութիւններ նոյն իսկ ներկայ ժամանակներում։ Ահա թէ ինչու դրամայի մի երևոյթ չը կար, որ չը ցնցէր հասարակութիւնը, տեսարան չը կար, որ արտասուք չը քամէր նրա աչքերից։ Բացի բնական կարեկցութիւնը, որ յարուցանում էր դրաման ղէպի Վրաստանի մարտիրոսական անցեալը, հանդիսատեսների առաջ նա կրկնում էր տեսարաններ նրանց անցեալից և ներկայից։ Եւ թերևս կամ ամենահաւանականն է, որ ներկայ եղողների մէջ կային նոյն իսկ ականատեսներ նոյնանման տեսարանների։

Այսպէս, Իշխան Սումբատովի պատմական դիէսան տեղականից աւելի ընդհանուր նշանակութիւն է ստանում և դրա հետ միասին շնորհիւ իր գեղարուեստականութեան, հազիւ թէ մի որ և իցէ ժամանակ ինչի Կովկասի բեմերից։

Այս նիւթի մշակման մէջ Սումբատովի ընդունակութիւնները գործել են առանձին զարկով, հանելով մեծ բէալիզմի, չնչին բացառութիւններով, առաջ եկած Սումբատով էֆֆեկտասիրութիւնից, երբ տեսարանը յաղթում է նրա մէջ ստեղծագործողին,—մի յատկութիւն, որ կարմիր թելի նման անցնում է նրա պիէսների մէջ։

Որքան դրամատիկական լինի մի պատմութիւն, շատ դժուար է նրանից դրամա ստեղծել։ Պատմական անցքերը ինչքան էլ սոսկալի լինեն, ցրիւ են, բազմազան առիթներից ծագած. նրանց կապել մի ներքին կապով, դրամատիկական հանգոյցի շուրջը և բնական ձևով տանել վերջինիս զարգացման հետ, շատ դժուար է։ Այս իսկ պատճառով է, որ պատմական պիէսները, ըստ մեծի մասին դուրս են գալիս ճռճռան դեկլամացիաներ, անկենդան, անկապ ներքուստ, ոչ գեղարուեստական գործեր, վերջիններիս յատուկ բարդութիւններով, բոլորը միասին ներքուստ կապով կապված, մէկը միւսին պայմանաւորող։ Ըստ մեծի մասին կամ պատմութիւնն է գոհ գնում էրօսին կամ էրօսը պատմութեանը։ Այդ դժուար խնդիրը՝ Իշխան Սումբատովը լուծել է զարմանալի աջողութեամբ։ Նա ընտրել է այնպիսի հանգոյց, որը ընդունակ է անսահման ծաւալ ընդունել և նեարդերով կապվել ընտրած կենսական շրջանի բոլոր երևոյթների հետ, հետևաբար հնարաւորութիւն է ստեղծել գեղարուեստական երկերի էական կազմը լրիւ լրացնելով, բարդել նրան ըստ իր կամաց։

(Կը շարունակվի)

ԻՍԱՀԱԿ ԱԼԱՃԱԼԵԱՆ

—

Իսահակ Ալաճալեանը մեռաւ։
Ես ճանաչում էի նրան վաղուց։
Իրբև նոր սան Նոր-Նախիջևանի բարեգործական ընկերութեան, ես պիտի ներկայանայի 1872-ին նախագահին։
Նախագահը Իսահակ Ալաճալեանն էր։
Լազարեան ճեմարանում առաջի Նոր Նախիջևանցու անունը որ կարդացի ոսկետառ գրած պատուաւոր տախտակի վրա, Իսահակ Ալաճալեանի անունն էր։
Յետոյ կեանքի մէջ շփվում էինք երկար ժամանակ։
Իսահակ Ալաճալեանը շատ բարի էր, շատ ազնիւ, բարեխիղճ, վեհանձն, բայց նրան պակասում էր մի բան։
Հաստատ կամք։
Ահա Իսահակ Ալաճալեանը չը դարձաւ հասարակական գործիչ և մեց միայն իբրև հետաքրքիր հասարակական... երևոյթ, անհասկանալի շատերի համար։
Նա բժիշկ էր և չէր բժշկում։
Ընտրվում էր նախագահ ընկերութիւնների և յանձնաժողովների և շուտ հրաժարվում։
Իբրև քաղաքագլուխ՝ պաշտօնից հեռացաւ, տեսնելով իր դէմ լարած ինտրիգներ։
Նա նախագահ էր ընտրված եկեղեցական յանձնաժողովի, որ պիտի ծախսէր 200—300 հազար ր. և պիտի շինէր Թաստովում մի տուն։ Տունը շինվեց, բայց նա շուտ էր հրաժարվել իր պաշտօնից. տունը շինվեց առանց պ. Ալաճալեանի։ Սկսվեց խռովութիւն, երկպառակութիւն. քիչ էր մնում հոգաբարձութիւնը քանդվէր։ Բոլորը իր կարգին կերթար, ոչ մի խռովութիւն չէր լինի, եթէ նախագահ մնար պ. Ալաճալեանը։
Հասարակութիւնը միշտ հաւատում էր Իսահակ Ալաճալեանին։
Նա երբէք իզուր չէր գործածում այդ հաւատը և սակայն երբէք էլ չէր արդարացնում։
Հանգուցեալը ինքն էլ սիրում էր ընտրվել, բայց գործելու հաստատ կամք չունէր և իբրև բարեխիղճ մարդ՝ շուտ էր հրաժարվում պաշտօնից։
Եւ երբ ես նայում էի այդ ինտելիգենտ բարձրահասակ, ալեզարդ ծերունուն, որ գլուխը բարձր էր բռնում և տանում, ես մտածում էի. որչափ բարութիւն, որչափ ազնուութիւն, որչափ վեհանձնութիւն մեզ համար, ափսոս, առ միշտ, առ միշտ կորած...
Երևակայեցէք մի թանգագին, գեղեցիկ, ոսկեայ ժամացոյց, որը չէ բանում, կանգ է առել և չէ ցոյց տալիս ոչ ժամ, ոչ րօպէ, կորած է բանալին, իսկ ժամագործը իր հետն է տարել բանալի շինելու գաղտնիքը։ Նայում ենք, հիանում, բայց չենք գործածում այդ ժամացոյցը, չենք օգտվում, նա զարդ է դարձել միայն մեր առանձնատեսիլակին, մեր հիւրերին հրաւիրելու համար...
Այդպիսի մի ժամացոյց էր և Իսահակ Ալաճալեանը։
Իսահակ Ալաճալեանները հետաքրքիր հասարակական երևոյթներ են մեզանում։
Նրանց գոյութիւնը պատիւ է բերում մեզ, որովհետև բարին և ազնիւը մեծ արժէք ունեն ինքն ըստ ինքեան, որովհետև բարին և ազնիւը հազուագիւտ են մեզանում։
Բայց Ալաճալեաններից էական օգուտ հասարակութիւնը չունի և կարող չէ ունենալ։
Նայում ենք նրանց վրա, ուրախանում, զմայլում, հաւատում, շատ հաւատում։
Իզուր յոյսեր...
Նրանց պակասում է հաստատ կամք գործելու, աշխատելու, մեզ առաջնորդելու։
Եւ փոխանակ դառնալու հասարակական գործիչներ, նրանք միայն մնում են հետաքրքիր հասարակական... երևոյթ։
Եկեղեցու մէջ լսելով երկու քահանաների ճառերը և հանգուցեալի կեանքի նկարագրութիւնը, ես ցաւում էի ոչ թէ նրա համար, որ մեռաւ Իսահակ Ալաճալեանը, թաղում ենք նրան. ոչ, ես խոր մտածմունքի մէջ ցաւում էի նրա համար, որ հանգուցեալը դեռ շատ վաղուց, հասարակական ասպարէզի առաջի քայլերից, իր կամքով թաղել էր իր բարութիւնը, իր ազնուութիւնը, իր վեհանձնութիւնը, թաղել էր, հեռանալով էական գործունէութիւնից։
Մենք դիմում ենք Ալաճալեաններին, որ կեանքով լի են, ապրում են մեր ամեն անկիւններում, յիշեցնում ենք նրանց, որ բաւական չէ լուսաւորել, պէտք է տաքացնել։ Թող լոյսը լինի աղօտ, փոքր ինչ տաքութիւն, ի սէր Աստուծոյ, միայն փոքր ինչ տաքութիւն։ Ցուրտ է, խոնաւ է։
Մրսում ենք։
Զը սառենք բոլորովին։

Գր. Զարիանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Հոկտեմբերի 26 և 27-ին Բազում և Նրա շրջակայքում խոլերայով հիւանդանալու կամ մեռնելու ոչ մի դէպք չէ նկատվել։

—

Կովկասի քաղաքացիական մասի բժշկական բաժնի գլխաւոր կառավարիչ Մ. Ն. Ֆենոմենովը երէկ մեկնեց Թիֆլիսից Զուլֆա, որպէս զի միջոցներ ձեռք առնէ Պարսկաստանից խոլերայի Կովկաս մտնելու դէմ։ Նրա պարտականութիւնն է նաև միջոցներ ձեռք առնել Ուլուխանլու Զուլֆա նոր շինվող երկաթուղու բանուորների մէջ բաւական արդէն տարածված խոլերայի դէմ։

—

Մենք ստացանք. 1) Էմինեան ազգագրական ժողովածուի հինգերորդ հատորը, որ պարունակում է իր մէջ Հայկունու ժողոված ազգագրական նիւթեր հայ-քրդական վէպերի մասին. հատորը բաղկացած է մեծադիր 304 երեսից. գինն է 1 ր. 50 կ., 2) Ատրպեատի երկերի ժողովածուի վեցերորդ հատորը, տպված Թաւրիզում, բաղկացած 323 երեսից, 3) վրացի գրող հանգուցեալ Կազբէկի աշխատութիւնների ժողովածուն ամփոփված մի խոշոր հատորում, բաղկացած մեծադիր 1204 երեսից, հեղինակի լուսանկարով. և 4) պրոֆէսոր Թումայեանի խմբագրութեամբ անգլերէն լեզուով հրատարակվող «Armenian News» թերթը, որ պարունակում է տեղեկութիւններ հայերի մասին։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան յանձնարարութիւնով՝ քաղաքային տեխնիկ Ա. Պ. Զախմախոզեանցն անցեալ օրը ներկայացրել է վարչութեանն իր կազմած վիճակագրական տեղեկութիւնները Թիֆլիսի արդիւնաբերական հաստատութիւնների մասին։ Այդ տեղեկութիւններից երևում է, որ Թիֆլիսում բոլոր գործարանների (զաւոդ), ֆաբրիքների և էլեկտրական կայարանների թիւը հասնում է 172-ի։ Դրանց մի մասը գնահատված է 676,000 ր. և քաղաքին տալիս է 5,000 ր. եկամուտ, իսկ մօտ կէս մասը դեռ չէ գնահատված և պէտք է շուտով գնահատութեան ենթարկվի քաղաքի գործակալների ձեռքով։

—

Ստացանք երդուեալ հաւատարմատարի օգնական Ս. Գ. Տէր Մինասեանի կազմած սէր հաստատ ցուցակը, տպված մի մեծ թերթի վրա։ Նա կրում է հետևեալ վերնագիրը. «Необходимыя свѣдѣнія о векселяхъ»։ Այդ ցուցակն իր մէջ պարունակում է մուրհակների և նրանց մակագրութեան ձևերը, նրանց ժամանակամիջոցները նշանակելու և որոշելու եղանակները, որոնց համար և բերված են օրինակներ, և, վերջապէս, մուրհակի բողոքելու կամ դատական պահանջների օրէնքները։ Գինն է 10 կոպէկ։ Այդ ցուցակը տալիս է բաւական մեծ դիւրութիւն մեր առևտրականներին և հաշուապահներին մուրհակների ժամանակամիջոցները որոշելու համար։ Չէ որ Կովկասի հաշուապահների անագին տոկոսը բոլորովին տգէտ մարդիկ են. նրանց համար այդպիսի աղբիւրներ ու ցուցակները շատ անհրաժեշտ են։

—

Վլադիմիրի նահանգի գաւառական զեմստվոների վճիռներից մի քանիսի դէմ բողոքել է նահանգապետը։ Օրինակ՝ Սուզդալեան զեմստվոյի ժողովը, անհրաժեշտ և անյետաձգելի համարելով ժողովրդի ամենաաղքատ մասին իրաւաբանական օգնութիւն հասցնելը, վճռել էր մի փոքրիկ գումար յատկացնել այդ գործին։ Այդ վճռի դէմ բողոքել է նահանգապետը, պնդելով, որ դա զեմստվոյի իրաւասութիւնից դուրս բան է։—Կոլոմնայի գաւառական զեմստվոյի ժողովը որոշել էր իր տնտեսական խորհուրդը, որ արդէն գոյութիւն ունի, ընդարձակել, հրաւիրելով նրան մասնակցելու երկրագործութեան մինիստրի լիազօրին և գիւղացիներից մէկ-մէկ ներկայացուցիչ ամեն մի գիւղախումբից կամ վոլոստից, ընտրված գիւղախմբերի ժողովներից։ Այդ վճռի դէմ էլ բողոքել է նահանգապետը, միայն ոչ թէ լիազօրի մասնակցութեան առիթով, այլ միայն ընտրվի գիւղացիների մասնակցութեան դէմ։

—

Մարկովի համալսարանի վարչութիւնը, ինչպէս հաղորդում են տեղական լրագիրները, ստացել է բաւական թուով խնդիրներ միջնակարգ կրթութիւնն աջողութեամբ աւարտած կիներից, որոնցով նրանք խնդրում են, որ իրանց թոյլատրվի գրվել աստ ունկնդիր և դասախօսութիւններ լսել համալսարանում։ Այդ խնդիրները մերժվում են։

—

Մոսկվայից գրում են տեղական «Н. Об.» լրագրին, որ վաճառելի աղբիւրից ստացած տեղեկութիւնների համաձայն, հետևեալ ուսումնական տարին, Մոսկվայի համալսարանի պատմա-լեզուաբանական ֆակուլտետում պէտք է բացվի հայերեն լեզուի և հայկական բանահիւսութեան պատմութեան մասիօն։ Այդ պաշտօնն ստանձնելու համար հրաւիրվելու է պրոֆեսոր Ալիշանը։

—

Հոկտեմբերի 29-ին Բաքուում և նրա շրջակայքում խոլերայով հիւանդանալու կամ մեռնելու ոչ մի դէպք չէ նկատվել։

—

Մենք ստացանք. 1) Էմինեան ազգագրական ժողովածուի հինգերորդ հատորը, որ պարունակում է իր մէջ Հայկունու ժողոված ազգագրական նիւթեր հայ-քրդական վէպերի մասին. հատորը բաղկացած է մեծադիր 304 երեսից. գինն է 1 ր. 50 կ., 2) Ատրպեատի երկերի ժողովածուի վեցերորդ հատորը, տպված Թաւրիզում, բաղկացած 323 երեսից, 3) վրացի գրող հանգուցեալ Կազբէկի աշխատութիւնների ժողովածուն ամփոփված մի խոշոր հատորում, բաղկացած մեծադիր 1204 երեսից, հեղինակի լուսանկարով. և 4) պրոֆէսոր Թումայեանի խմբագրութեամբ անգլերէն լեզուով հրատարակվող «Armenian News» թերթը, որ պարունակում է տեղեկութիւններ հայերի մասին։

—

Թիֆլիսի քաղաքային վարչութեան յանձնարարութիւնով՝ քաղաքային տեխնիկ Ա. Պ. Զախմախոզեանցն անցեալ օրը ներկայացրել է վարչութեանն իր կազմած վիճակագրական տեղեկութիւնները Թիֆլիսի արդիւնաբերական հաստատութիւնների մասին։ Այդ տեղեկութիւններից երևում է, որ Թիֆլիսում բոլոր գործարանների (զաւոդ), ֆաբրիքների և էլեկտրական կայարանների թիւը հասնում է 172-ի։ Դրանց մի մասը գնահատված է 676,000 ր. և քաղաքին տալիս է 5,000 ր. եկամուտ, իսկ մօտ կէս մասը դեռ չէ գնահատված և պէտք է շուտով գնահատութեան ենթարկվի քաղաքի գործակալների ձեռքով։

—

Ստացանք երդուեալ հաւատարմատարի օգնական Ս. Գ. Տէր Մինասեանի կազմած սէր հաստատ ցուցակը, տպված մի մեծ թերթի վրա։ Նա կրում է հետևեալ վերնագիրը. «Необходимыя свѣдѣнія о векселяхъ»։ Այդ ցուցակն իր մէջ պարունակում է մուրհակների և նրանց մակագրութեան ձևերը, նրանց ժամանակամիջոցները նշանակելու և որոշելու եղանակները, որոնց համար և բերված են օրինակներ, և, վերջապէս, մուրհակի բողոքելու կամ դատական պահանջների օրէնքները։ Գինն է 10 կոպէկ։ Այդ ցուցակը տալիս է բաւական մեծ դիւրութիւն մեր առևտրականներին և հաշուապահներին մուրհակների ժամանակամիջոցները որոշելու համար։ Չէ որ Կովկասի հաշուապահների անագին տոկոսը բոլորովին տգէտ մարդիկ են. նրանց համար այդպիսի աղբիւրներ ու ցուցակները շատ անհրաժեշտ են։

—

Վլադիմիրի նահանգի գաւառական զեմստվոների վճիռներից մի քանիսի դէմ բողոքել է նահանգապետը։ Օրինակ՝ Սուզդալեան զեմստվոյի ժողովը, անհրաժեշտ և անյետաձգելի համարելով ժողովրդի ամենաաղքատ մասին իրաւաբանական օգնութիւն հասցնելը, վճռել էր մի փոքրիկ գումար յատկացնել այդ գործին։ Այդ վճռի դէմ բողոքել է նահանգապետը, պնդելով, որ դա զեմստվոյի իրաւասութիւնից դուրս բան է։—Կոլոմնայի գաւառական զեմստվոյի ժողովը որոշել էր իր տնտեսական խորհուրդը, որ արդէն գոյութիւն ունի, ընդարձակել, հրաւիրելով նրան մասնակցելու երկրագործութեան մինիստրի լիազօրին և գիւղացիներից մէկ-մէկ ներկայացուցիչ ամեն մի գիւղախումբից կամ վոլոստից, ընտրված գիւղախմբերի ժողովներից։ Այդ վճռի դէմ էլ բողոքել է նահանգապետը, միայն ոչ թէ լիազօրի մասնակցութեան առիթով, այլ միայն ընտրվի գիւղացիների մասնակցութեան դէմ։

—

Մարկովի համալսարանի վարչութիւնը, ինչպէս հաղորդում են տեղական լրագիրները, ստացել է բաւական թուով խնդիրներ միջնակարգ կրթութիւնն աջողութեամբ աւարտած կիներից, որոնցով նրանք խնդրում են, որ իրանց թոյլատրվի գրվել աստ ունկնդիր և դասախօսութիւններ լսել համալսարանում։ Այդ խնդիրները մերժվում են։

—

Մոսկվայից գրում են տեղական «Н. Об.» լրագրին, որ վաճառելի աղբիւրից ստացած տեղեկութիւնների համաձայն, հետևեալ ուսումնական տարին, Մոսկվայի համալսարանի պատմա-լեզուաբանական ֆակուլտետում պէտք է բացվի հայերեն լեզուի և հայկական բանահիւսութեան պատմութեան մասիօն։ Այդ պաշտօնն ստանձնելու համար հրաւիրվելու է պրոֆեսոր Ալիշանը։

—

Հոկտեմբերի 29-ին Բաքուում և նրա շրջակայքում խոլերայով հիւանդանալու կամ մեռնելու ոչ մի դէպք չէ նկատվել։

—

Կովկասի քաղաքացիական մասի բժշկական բաժնի գլխաւոր կառավարիչ Մ. Ն. Ֆենոմենովը երէկ մեկնեց Թիֆլիսից Զուլֆա, որպէս զի միջոցներ ձեռք առնէ Պարսկաստանից խոլերայի Կովկաս մտնելու դէմ։ Նրա պարտականութիւնն է նաև միջոցներ ձեռք առնել Ուլուխանլու Զուլֆա նոր շինվող երկաթուղու բանուորների մէջ բաւական արդէն տարածված խոլերայի դէմ

բոֆէսոր Գ. Ա. Խալաթեանցը, որ թողել է արդէն Լազարեան ճեմարանի դպրանոցական բաժնի տեսչի պաշտօնը։

—

ՍԻՄՖԵՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Տաւրիկեան նահանգի ուսումնարանների դիրեկտօրը տեսնելով, որ հայոց ուսումնարանի եկամուտներով առաջ տանել ուսումնարանի կառավարութիւնը անկարելի է, առաջարկել է տեղիս հայոց ուսումնարանի հոգաբարձութեան ընդունել նորից ուսումնարանի մնտեսական մասի կառավարութիւնը իր վրա, միայն թէ՝ ամեն ծախսերի մասին հաշիւ ներկայացնելով իրան։ Տեղիս հոգաբարձութիւնը համաձայնութիւն տալով դիրեկտօրի առաջարկութեան, ամսիս 24-ին ծխական ժողով կայացրեց հոյոց ուսումնարանի դահլիճում և միաձայն ընտրեց հետևեալ անձերին. պ. Միքայել Ալենաքեանին և պ. Խաչատուր Վարդանեանին։ Երկուսը ևս բարեխիղճ անձնաւորութիւններ են։ Յուսով ենք, որ ժողովրդի կարծիքը իրանց վրա կարդարացնեն։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

Ի՞նչ նշանակութիւն ունի Բօժեվենսկու էսկադրան Ռուսաստանի համար։ Այդ հարցի առիթով «Рус. Вѣд.» լրագրի պատերազմական քննադատը հետևեալ կարծիքն է յայտնում։ Ծովապետ Բօժեստվենսկու բախտը մեծ նշանակութիւն ունի ոչ միայն ներկայ պատերազմի ելքի համար, այլ և առհասարակ Ռուսաստանի համար, իբրև ծովային պետութեան։ Չը պէտք է մոռանալ, որ դա—ոչ միայն մեր վերջին յոյսն է ծովի վրա, այլ և մեր վերջին ծովային բեկորը (պահեստի ոյժը)։ Դեռ նոր-բերս մենք մատնացոյց արինք այն հանգամանքի վրա, որ ծովապետ Բօժեստվենսկու էսկադրայի Հեռաւոր Արևելք գնալուց յետոյ մեզ մօտ Բալտիկ ծովում մնացել է միայն ծովափնեայ պաշտպանութեան համար մի անշան նաւատորմ։ Եկող տարի, հաւանօրէն, կը պատրաստվի մի նոր էսկադրային զրահաւոր («Սլաւա», «Իօրօդինօի» տիպի) և մինչև 1907—1908 թ., երբ կարող է վերջանալ նոր հսկայական «Անդրէյ Պերվոզվոնի» և «Կայսր Պաւել I» զրահաւորների շինութիւնը, մեր նաւատորմը չի ստանայ ոչ մի էական յաւելումներ նաւային կազմի մէջ։ Մամուլի մէջ, ճիշդ է, երևացին լուրեր՝ մի ամբողջ նոր ահագին նաւատորմի արտասահմանում շինելու ծրագրի մասին, որի համար իբր թէ պէտք է յատկացվի 400 միլիոն ռուբլի, բայց դժուար թէ իրագործելի լինի այդպիսի հսկայական ծրագիրը։ բացի գործի ֆինանսական կողմից, այդպիսի արագաց, ինչպէս 25—30 մեծ զրահաւորային նաւեր, արտասահմանում տեղ չը կայ շինելու, բացի գուցէ Անգլիայից։ Գերմանական մասնաւոր նաւաշինարաններ այնքան ծանրաբեռնված են իրանց սեփական նաւատորմի համար նաւեր—թէ առևտրական և թէ պատերազմական—շինելու աշխատութիւններով, որ անկարող են վեց—ութ նաւից աւելի պատուէր ընդունելու։ Զրահաւոր շինելու համար Գերմանիայում պէտք է 5 տարի և 1905 թ. պատուիրված նաւերը կարող են պատրաստ լինել միայն 1909—1910։ Բայց մինչև այդ ժամանակ և անգլիական, և գերմանական նաւատորմները սատիկ կը մեծանան և մենք ոչ մի բան չենք շահի ծովային ոյժերի վերաբերմամբ։ Առհասարակ, այդ տեսակ հսկայական ծրագիրների նպատակները բոլորովին ուտոպիական են. հազիւ թէ այդ ծրագիրն էլ գոյութիւն ունենայ իրապէս։

Ռուսաց բանակի առաջիկայ գործողութիւնները։ Արտասահմանեան լրագիրների վերջին համարները լիքն են ենթադրութիւններով պատերազմող կողմերի առաջիկայ գործողութիւնների մասին. նրանք հաշիւներ են անում ռուսների երեք նոր կազմակերպված բանակների առիթով։

«Berliner Local-Anzeiger» լրագրի կարծիքով, ռուսները կունենան նոյեմբերի վերջը (ն. տ.) 302 բատալիոն հետևակ, 180 էսկադրոն և հարիւրեակ հեծելազօրք, 1252 թնդանօթ և գնդաձիգ և 47 վաշտ ինժենիերային զօրքեր, բոլորը 400,000 մարդ։ Ի նկատի առնելով, որ ռուսների հաշիւով եապօնացիները ունեն միայն 305—308,000 մարդ, վերև բերած թուանշանը բաւական կը լինի յարձակողական գործողութիւններ սկսելու համար։ «Temps» լրագիրը ենթադրում է, որ մանջուրական երեք զօրաբանակներից իւրաքանչիւրը բաղկացած կը լինի չորս կորպուսներից։

«Berliner Tageblatt» և «Neue Freie Presse» լրագիրների տեղեկութիւնների համեմատ, ներկայ րոպէում ռուսաց գլխաւոր հրամանատարի պլանը բացառապէս պաշտպանողական է, և մինչև անգամ նախատեսվում է, որ եթէ եապօնացիները շատ նեղեն, ռուսները յետ կը քաշվեն դէպի Տէլին, եռանդուն դիմադրութիւն ցոյց տալով Մուկդէնի մօտ։ Հնարաւոր է համարվում ռուսների յարձակողական արշաւանք սկսելը երկրորդ բանակը կենտրօնացնելուց յետոյ, որ տեղի կունենայ դեկտեմբերի սկզբին։

«Neue Freie Presse» լրագրի պատերազմական բաժինը վարողը սակաւ հաւանական է համարում ներկայ հանգամանքներում եապօնացիների յարձակողական արշաւանք սկսելը և կարծում է, որ թէ ռուսների խաղաղ-ովկեանոսական էսկադրայի աջողութիւնը և թէ եապօնացիների համար Մուկդէնի մօտ ճակատամարտ տալու հնարաւորութիւնը սերտ կապված են Պօրտ-Արտուրի բերդի վիճակի հետ։ Միայն Պօրտ Արտուրի անկումը կարողութիւն կը տայ եապօնացիներին ուժեղացնելով Օյամայի բանակը, իսկական յարձակողական արշաւանք սկսելու և վճռողական բնաւորութիւն տալու այդ բանակին։ Լրագրի կարծիքով, Պօրտ Արտուրը վերցնելուց յետոյ, Օյաման պէտք է տիրէ Խարբինին, և ապա եապօնացիների մերձաւոր նպատակը անխուսափելի կերպով կը դառնայ Վլադիվոստոկը։ (Нов. Вр.)

Պօրտ-Արտուրի դրութիւնը։ Լոնդոնից հոկտեմբերի 25-ին հեռագրում են «Бирж. Вѣд.» լրագրին. «Աղաւնու ծովախորշի մօտ արդէն տասներորդ օրն է, որ անընդհատ շարունակվում է կռիւը, մեծ մասամբ հրացանագութիւն։ Անընդհատ կռիւների մասին հաղորդում է և «Daily Mail» լրագրի թղթակիցը Չիֆուից, որի խօսքով շաբաթ օր շարունակվում էր եապօնացիների յարձակումը, չը նայելով բուքին և աւազի բարձրացող սիւնին։ Ամբողջ գիշեր շաբաթ լոյս կերակի եապօնացիները սպասում էին ռուսական էսկադրայի դուրս գալուն Պօրտ-Արտուրից, և ծովապետ Ուրիուի էսկադրան երթևեկում էր Կիաս-Զաօի և Վէյ-Հայ-Վէի միջև։ Ակներև է, որ եապօնացիների բոլոր պատերազմական նաւերը կամ կենտրօնացած են Պօրտ-Արտուրի մօտ, կամ կարկատվում են եապօնական նաւաշինարաններում։ Գոնէ ինչպէս հաղորդում են Չիֆուից, եկած շոգենաւերից մէկի կապիտանը, ամբողջ տարածութեան վրա, սկսած Վլադիվոստոկից մինչև Պէչիլեան ծոցը, չէ հանդիպել ոչ մի եապօնական պատերազմական նաւի։ Վերջերս Վլադիվոստոկ գալիս է շաբաթական մէջին թւով մէկ շոգենաւ։ (Рус. Вѣд.)

«Echo de Chine» լրագրին Չիֆուից հաղորդում են, որ չինական ջոնկաները չեն դադարում Պօրտ-Արտուր բերել թարմ մթերքներ, որովհետև նրանց աշխատութիւնը առատ վարձատրվում է։ Ջոնկաները սովորաբար մօտենում են Աղաւնու ծովախորշին, ուր եապօնական կրէյսէրներ չը կան, որովհետև այնտեղ դրված են ականներ։ Չիֆուում սպառնալի հակառակութիւն է նկատվում այնտեղ ապրող գերմանացիների և եապօնացիների միջև։ Շատ յաճախ նրանց մէջ ընդհարումներ են տեղի ունենում փողոցում։ Այդպիսի ընդհարումներից մէկի ժամանակ քարկոծեցին գերմանական հիւպատոսին։ Յանցաւոր եապօնացիները ձերբակալված և դատի են ենթարկված։ (Бирж. Вѣд.)

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

29 հոկտեմբերի

ԴՎԻՆՍԿ, 29 հոկտեմբերի։ Առաւօտեան ժամը 10-ին ժամանեց Թագաւոր Կայսրը Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի և շքախումբի հետ։ Կայսրը անցկացաւ պատուաւոր պահակի առջևով. նրան թողեց անցնելու հանդիսաւոր քայլերգով և պրաւօսլաւնի հոգևորականութիւնից ընդունեց մի պատկեր, իսկ քաղաքագլխից աղ ու հաց։ Թագաւոր Կայսրը ողորմածաբար շնորհակալութիւն յայտնեց և ոգևորված «ուրա»-ների ուղեկցութեամբ մեկնեց Պատերազմական կոչված դաշտը։ Ժամը 10½-ին Թագաւորը Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչի հետ միասին հասաւ զօրքերի մօտ, ուղեկցված պալատի և զինուորական նախարարներով և շքախմբով։ Թագաւորը՝ ձիով անցնելով զօրքերի դիմացով, ողորմածաբար բարևում էր։ Զօրքերն անցան հանդիսաւոր քայլերգով և արժանացան Կայսերական «Շնորհակալութեան»։ Յետոյ Կայսրը շնորհաւորեց նրանց արշաւանքը, մաղթելով բարի վերադարձ և օրհնեց։ Հրաժեշտը սրտաշարժ էր։ Միապետին հրաժեշտ տալիս՝ զինուորները փափախները վեր էինետտում և վերցնում սուինների ծայրին։ Գալով Կայսերական գնացքի մօտ, Թագաւորը հրաժեշտ տուեց ժողովրդին և Արքայական գնացքը մեկնեց՝ երկար ժամանակ հնչվող «ուրա»-ներով ուղեկցված։ Թագաւորը լուսամուտի մօտ կանգնած, ողորմածաբար բարևում էր ուղեկցողներին։

ԽԱՐԲԻՆ, 29 հոկտեմբերի։ (Սեփ. թղթ.)։ Լուրերին նայելով, եապօնացիներն իրանց թիկնակողմը պաշտպանում են խունխուզ կամաւորներով՝ նրանց յայտնի զեկավարի հրամանատարութեան տակ. Լեաօեանի և շրջակայքի տեղացի չինական ազգաբնակութեանը մեծ փնտներ են պատճառում, որից և առաջանում է մեծ անբաւականութիւն այդ շրջանի չինացիների մէջ։—Ասում են, որ Կուրօկիի հիւանդութիւնը և բազմաթիւ վիրաւորներն ու հիւանդները խիստ խանգարում են եապօնացիների առաջխաղացութեանը։

ՎԱՐՇԱՎԱ, 29 հոկտեմբերի։ Անկարգութիւնների մասին լրագիրների հաղորդած տեղեկութիւնները չափազանցրած են։ Բոլոր գործը սահմանափակվեց նրանով, որ երէկ Պետերբուրգ—Վարշաւեան երկաթուղու կայարանում ուղարկվող պահեստազօրքի մի մասը, մօտ 1000 հոգի, չէր ուզում նստել վառարան չունեցող վագոններում։ Նրանց խոստացան Բելօստոկում տեղափոխել տաք վագոններ։ Գնացքը մեկնեց 3 ժամ ուշ։

30 հոկտեմբերի

ՎԱՐՇԱՒԱ։ Պրիվիսլեանդեան շրջանում զօրաշարժը կամ մոբիլիզացիան բաւարար անցաւ։ Պլօցկի և Կէլեցկի նահանգներում ոչ մի դէպք չը պատահեց. Վարշաւայի և Պետրօկովի նահանգներում արտայայտութիւններ եղան, բայց ոչ պահեստազօրքերի, այլ նրանց ուղեկցող մի քանի ընտանիքների կողմից։ Բացի դրանից՝ խառնակութիւններ եղան մեծ քանակութեամբ զօրքեր կուտակվելու առիթով մի քանի կէտերում, որ առաջ եկաւ սպասված զօրքերի համար բնակարանների սակաւութիւնից։ Արտասահմանեան և լեհական լրագիրների հաղորդած տեղեկութիւնները իշխանութիւնների հետ եղած լուրջ ընդհարումների մասին արժանի չեն հաւատի։

ՀԷԼՍԻՆԳՖՕՐՍ։ Գաղտնի խորհրդական Շաումանը, որ մեղադրվում է պետական դաւաճանութեան մէջ և որին ազատ են թողել մինչև գործի վերջանալը, երէկ Աբօից ժամանեց երկաթուղով։ Կայարանում, դեռ գնացքի գալուց շատ առաջ, հաւաքվել էր ամբոխը, որը դիմաւորեց նրան ոգևորված «ուրայով»։ Երբ Շաումանը դուրս եկաւ կայարանից, նրան դիմաւորեցին «Վօրտ-Լանդ» կամ ազգային հիմն երգելով, որ հնչեցնում էր հրապարակի վրա հաւաքված ամբոխը։ Երկրորդ ցոյցը կատարվեց նրա բնակարանի առաջ։

ԽԱՐԿՕՎ։ Հարաւային Ռուսաստանի հանքագործների 29-դ ժողովը հրաւիրվում է նոյեմբերի 4-ին։

ՉԻՖՈՒ, 29 հոկտեմբերի։ (Վոլֆ)։ Չինացիների ասելուն նայելով, եապօնացիներն ամենևին չեն տիրել Էրլուշան մարտկոցին, այլ միայն մի անշան դիրքի, որ գտնվում է յիշված մարտկոցի մօտերը։

ՊԱՐԻԶ, 29 հոկտեմբերի։ (Սեփ. թղթ.)։ Հնդկաչինի զօրքերի հրամանատար Շըվալիէն այս րոպէիս մի նամակ ստացաւ իր ընկեր գեներալ Սէլվիստրից, Մանջուրիայի ֆրանսիական զինուորական միսսիայի գլխաւորից։ Այդ նամակում գեներալ Սիլվէստրն գտնվում է Կուրօպատկինի հանճարով և յայտնում է, որ ռուս գլխաւոր հրամանատարի տաղանդը մինչև անգամ գերազանցում է այն մեծ հռչակը, որ նա ունի Ռուսաստանում։ Յետոյ գեներալը պնդում է, որ միայն իր պատերազմական հանճարի շնորհով, Կուրօպատկինը, չը նայելով թշնամու թւական ճնշող գերազանցութեանը և ամենաանբարեյաջող պայմաններին, կարող եղաւ եապօնացիներին ահագին վնասներ պատճառել, վատատակելով շատ ժամանակ, որ հանդիսանում է վերջնական յաղթութեան միակ գրաւականը։ Հաշուելով ստրատեգիական մի շարք նշանաւոր գործողութիւններ, Սիլվէստրն ասում է, որ Լեաօեանից յետ նահանջելը հանդիսանում է իբր մի պատերազմական քաջագործութիւն, որ իր նմանը չունի անցեալում։ Նա մշտապէս կը մնայ Ռուսաստանի պատմութեան ամենափառաւոր երեսներից մէկը։

30 հոկտեմբերի

ՄՈՒԿԴԷՆ, 28 հոկտեմբերի։ (Ռէյտէր)։ Ռազմակոծութիւնը շարունակվում է ընդմիջումներով։ Այ թէի վրա նա աւելի կատաղի էր, այնտեղ ռուսական բատարէաները հոկտեմբերի 27-ին հարուածում էին եապօնական դիրքերը պաշարողական թնդանօթներով։ Այդ ռմբակոծութեան հետևանքն այն եղաւ, որ եապօնացիներն ստիպվեցին իրանց բատարէաներից մի քանիսը, որ դրված էին առաջաւոր դիրքերում, յետ քաշել։ Ենթադրում են, որ եապօնացիները պատրաստ չը լինելով առաջխաղացութեան, քաշվում են լեռները։ Ռուսները մեծ առաւելութիւն ձեռք բերին, ճակատամարտի վերջում գրաւելով Շախէի մօտ ծառաւոր և Պուտիլօվեան բլուրը, որ տիրում է այն հարթավայրի վրա, որով եապօնացիները պէտք է առաջ արշաւեն։

ՏԵԱՆՑԶԻՆ, 30 հոկտեմբերի։ (Ռէյտէր)։ Տեղեկութիւններ կան, որ Սիմմինտինում պահված ռուս փողերը եապօնացիների մէջ մեծ գրգիռ են առաջացնում, որոնք՝ ինչպէս ասում են, միջոցներ են ձեռք առնում խլելու այդ փողերը։ Ռուսները մերժում են թոյլատրել զննելու այդ քաղաքը փոխադրված փողերը։ Գործն սպառնում է բարդանալ։

ՍԷՈՒԼ, 29 հոկտեմբերի։ (Ռէյտէր)։ Կօրէական Պուկչէն գաւառի գլխաւորը զեկուցանում է, որ 50 ռուս զինուոր գրոհ տուին տեղական բերդապահների վրա Պուկչէնում, խլեցին զէնքերը և պաշարները և այրեցին զօրանոցները։

ՍՈՒԴԱ, 29 հոկտեմբերի։ (Ռէյտէր)։ Այստեղ հասան գերմանական 3 փոխադրանաւ, նոյնպէս և կամաւոր «Տամբօվը»։ Ռուսական «Խրաբրիյ» պահականաւը վերադարձաւ այստեղ։ «Բրավի» հակառականաւը մեկնեց Պիրէա։

ՉԻՖՈՒ, 30 հոկտեմբերի։ (Ռէյտէր)։ Բերդապահների ոգին բարձրացաւ վերջերս եկած կենսական մթերքների պատճառով։ Ասում են, որ ռուսական պատերազմական բոլոր նաւերի տակ ականներ են սարքած, որոնք ռուսները պէտք է պայթեցնեն, հէնց որ եապօնացիները տիրեն վերջին մարտկոցներին։ Իբր թէ Ստեսսելը յայտնել է, որ ինչ գնով էլ լինի՝ նա պէտք է ոչնչացնէ էսկադրայի մնացորդները։

ԼՕՆԴՕՆ, 29 հոկտեմբերի։ (Վոլֆ)։ «Ռէյտէրի գործակալութեան» տեղեկութիւնների համեմատ, Պօրտ-Արտուրի անձնատուր լինելու լուրը բաց է թողված բօրսայի սպէկուլեացիայի կողմից՝ առանց փաստական հիմքի։

ՎԻԼՆԱ։ Արտասահմանում տարածված լուրերին իբր հերքում հաղորդում ենք, որ գեներալ Գրիպենբերգին ոչինչ չէ եղել։ Նա մեկնում է նոյեմբերի 4-ին։ Ազգաբնակութիւնը նուիրում է մի փառաւոր դրօշակ լիտվանական ձիաւորը և Կոնստանտին կայսրի խաչը վրան։

ՄՈՒԿԴԷՆ, 28 հոկտեմբերի։ (Ռէյտէր)։ Հոկտեմբերի լոյս 27-ի գիշերը ռուսներն արձակեցին 60 մեծ մէլինիտեան ռումբեր եապօնական բանակի վրա Սօսցէվ լեռնագագաթի դիմաց։ Եապօնացիները չէին պատասխանում ռուսների կրակին։—Իւրաքանչիւր գիշեր տեղի ունի արտիլերիական հրաձգութիւն, որի ժամանակ իւրաքանչիւր կողմը ստիպված է լինում փոխել թնդանօթների տեղը։ Սակայն ընդհանրապէս աւելի և աւելի խնայում են ռումբերը, սպասելով առաջիկայ ճակատամարտին։ Յայտնի է, որ եապօնացիները դրեցին խոշորաբերան թնդանօթներ Շախէ կայարանում և որ Խրատունը, առաջին կայարանը դէպի հիւսիս, այդպիսով կը գտնվի նրանց կրակի գործողութեան սահմանում։ Ռուսներին աջողվեց քանդել ջրմուղը Շախէ կայարանում, զրկելով եապօնացիներին դիտելու նշանաւոր կէտից։—Օֆիցէրներին և զինուորներին Թագուհու Կայսրուհու ուղարկած ընծաները բաժանելու առիթով տեղի ունեցան զինուորական ուրախութիւններ ռուսական բանակում։ Նուագում են գնդային երաժշտական խմբերը։ Զօրքերի ոգին շատ գոհացուցիչ է։ Զօրքը ներկայացնում է աւելի սարսափելի միապաղաղ ամբողջութիւն, քան առաջ։ Վառելիքի համար չինական տների աւերումը շարունակվում է միայն ռմբակոծութեան ենթարկվող տեղերում, ուր բնակարանների աւերումը անխուսափելի է։ Եղանակը տաք է։ Զինուորները տաքանում են արևի տակ։ Խրամատներում զօրքերը խրտուիլակներ են դնում նրանց վրա եապօնացիների կրակը հրաւիրելու համար։ Լուրերի համեմատ, արևելքում եապօնացիները Սայմատցուից դէնը չը գնացին, բայց կենտրօնանում են կենտրօնում։

ՎԻԵՆՆԱ։ Աւստրիական Կարմիր խաչի ընկերութիւնը որոշեց 100,000 կրոն նուիրել է

նպաստ եապօնական և ռուսական կարմիր խաչի ընկերութիւնների. երկուսին էլ մասամբ նիւթեղէնով, մասամբ առ ձեռն դրամով։

ՊՍՐԻԶ։ Ամէրիկական դեսպանը յանձնեց արտաքին գործերի մինիստրին պետական քարտուղար Հէյի յայտագիրը Հապագայի նոր կոնֆէրէնցկա գումարելու վերաբերմամբ։

ՅԷՏԻՆԻԷ։ Ալբանիայում նորից անկարգութիւններ բռնկեցին և օֆիցէրների ապստամբութիւն, որոնց հինգ ամիսների ընթացքում ոճիկ չէին տալիս։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Գեներալ-լէյտենանտ Սախարովի պաշտօնական հեռագիրը գլխաւոր շտաբին 1904 թի հոկտեմբերի 30-ին. «Հոկտեմբերի լոյս 30-ի գիշերը եապօնացիները յարձակում գործեցին երեք կողմերից Վուզչազին գիւղի վրա, Շուեալինզա գիւղից երկու վերստ դէպի հարաւ։ Յարձակումը յետ մղվեց։ Մերկորուստներն են—4 վիրաւոր զինուորներ»։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿ. ՄԻՆԱՍ ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախ՝ օրդինացօր Մոսկվայի Համալսարանի
կլինիկայի ընդունում է հիւանդներին՝
ՄԻՋԱՍԵՌԱԿԱՆ ՍԻՖԻԼԻՍԻ և ՄՈՐԹՈՒ
հիւանդութիւններով ամեն օր 10—11 ժ. առաւօտեան և 6—8 ժ. երեկոյեան։ Հասցէն Ռտիշչէվսկի փողոց, տուն № 1 «Պաժարնի կօմանդի» դիմաց, տելէֆոն 711.
(ա. օ.) 7—10

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, մորթու և վենէրական ախտ ունեցող հիւանդները ամենայն օր 12—2 առաւօտ. և 5—6 երեկ.
Մեծ Վանքի փողոց, տուն Կուզանովի—դեղատան կից։ (Չ. Հ.) 19—10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ՇԵՐՄԱԶԱՆԵԱՆՑ
Ընդունում է հիւանդները (բժշկութիւն, պլոմբ և արհեստական ատամներ շինել)։
Առաւօտեան 9—2
Երեկոյեան 4—7
Վանքի Մեծ փող. տուն Մարտիրոսեանի։
(Կ. Հ.) 18—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Բժշկ. Բ. Նաւասարդեան
տեղափոխվելով Թիֆլիսից ՐՕՍՏՈՎ
Հիւանդներին ընդունում է 11—12 ժ. առ. և 7—8 ժ. երեկոյեան։
Б. Садовая, 136, д. Бакалова.
(տ. կ. ե. հ.) 50—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԷՐԴԵԱՆ
Մասնագէտ սիզային և սիֆիլիսիքական հիւանդութիւնների,—ընդունում է հիւանդներին առաւօտեան 12 ժ.—1 ժ. երեկոյեան՝ 6. ժ.—9 ժ.։ Կուկիա, Սեմենովսկայա փ. № 20.
(տ. կ. ե.) 20—30

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԵՈՐԳ-ԲԵԳԵԱՆ
ԱԶՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր.
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վէլիամինովսկայա փողոց № 8։ (ե.ո.) 34—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Ս. Յ. ՔՍԹԱՆԵԱՆ
Վերսկսեց ընդունելութիւնը.—Ներքին և շղայլային հիւանդութիւններ։ Ամեն օր 9—11 ժ. [illegible] և 5—7 ժ. երեկոյեան։
Վելիամինովսկայա փողոց, № 13. տ. Սաֆարովի։ (ե. հ. կ.) 18—20

Նեյրոն և երեխաների հիւանդութիւնների
ԲԺՇԿ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՀԱՄԶԵԱՆՑԸ
Ընդունում է ամեն օր՝ առաւօտեան ժամը 9-ից մինչև 11-ը, երեկոյեան 5-ից մինչև 7-ը։ Սօլոլակ, Ռտիշչևսկի փողոց, տուն Դրբգիտեանի № 30, տելէֆոն № 847. (կ.ե.հ.շ.) 8—15

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ
Ս. Ս. ԱՓԱՆԱՍԵԱՆՔ
Դանձակից վերջապէս տեղափոխվել է բնակվում է Թիֆլիսում Վօզնեսենսկի փողոց Գալամքարովի տուն № 9. (ա.օ.) 25—30

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՕՆ
Ձեռնարկութիւն Կայսերական թատրոնների
արտիստ Լ. Դ. Դօնսկոյի
Այսօր, կիրակի, հոկտ. 31-ին բենեֆիս և հրաժեշտի ներկայացում Անտոնովայի, մասնակցութեամբ Անտոնովայի, Դմիտրիեվոյ Պոկասովսկայի, Նիկիտինայի, Բունակովայի, Խարիտոնովայի, պ.պ. Բոգդանովիչի, Կոմարովի, Սպերանսկու և Զարինսկու։
Կը ներկայացվի
Ի «ԼԱԿՄԷ»
օպեր. 3 գործ., երաժ. Դելիբա։
II-դ ԴԻՆՕՐԱ օպերայի II գործողութեան մի պատկերը, երաժ. Մեյէրբէրի։
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Վաղը, Երկուշաբթի, Նոյեմբերի 1-ին բենեֆիս և հրաժեշտի գաստրոլ Պետրովա-Զվանցէվայի, մասնակցութեամբ Լ. Դոնսկոյի, կը ներկայացվի ԿԱՐՄԷՆ, օպեր. 4 գործ. երաժ. Բիզէի։ Երեքշաբթի, Նոյեմբերի 2-ին առաջին զէբիւաի համար Ե. Ս. Օրել կը ներկայացվի ԴԷՄՕՆ, երաժ. Ռուբինշտէյնի։
Պատրաստում են ներկայացնելու Ֆեներլլի, օպեր. 1 գործ. երաժ. Օբէրի։
1—1 Կառավարիչ՝ Ի. Ա. Կէլլեր

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Երեքշաբթի, Նոյեմբերի 2 ին, Թիֆլիսի Ժողովարանի սիրողների խումբը, անդամների, կանդիդատների և նրանց ընտանիքների համար կը ներկայացնէ
Մասնակցութեամբ տ. Զաբէլի
Արդիւնաւոր Պաշտօն
Կօմ. 4 գործ. հեղ. Օստրովսկու։
Մասնակցում են. տ.տ. Զաբէլ, Յովհաննիսեան, օր.օր. Զմշկեան, Արիստոդեմեան, պ.պ. Տէր-Գրիգորեան, Խօջաթուսանեան, Վանշիր, Զիլիսաչոյեան, Մակարեան։
Տեղերի գները 1 բուբլ. մինչև 30 կոպ.
Սկիզբը ճիշդ ժամը 8½-ին երեկոյեան։
Աշակերտներին և աշակերտուհիներին արգելվում է յաճախել ներկայացումներին։
Ներկայացումից յետոյ
ՊԱՐԵՐ
1—2 Բեժիսսոր Գ. Վ. Միրզեան

Նոր լոյս տեսաւ
«ՌՈՒԴՕԼՖ ՎԻՐԽՕՎ»
ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ
Հրատ. Յովհաննես Թումանեանցի
Գինն է 25 կ.
Դիմել՝ Թիֆլիս, «Գուտենբերգ» գրախանութը։
Նոյն տեղը վաճառում են Յ. Արամեանի հետևեալ հրատարակութիւնները. Բեօրնսօն՝ կազմեց Ե. Թոփչեան, 10 կ., Մահմէդ՝—Ե. Թ. 7 կ., Սեր. պ Մաշտոց՝—Ե. Թ. 5 կ., Հաուպտման՝ Ե. Թ. 15 կ., Մեծն Ներսէս՝—Ե. Թ. 5 կ., Զրադաշտ՝ կազմեց Մ. Թամամշեան, 7 կ., Ընարութիւն կաթնատուների (26 պատկ.) Գ. Մեծատուրեանի, 15 կ։ 1—3

Կովկասի Ոստիկանական Շրջանի հոգաբարձական Խորհրդի որոշմամբ, որ հաստատված է Կովկասի քաղաքացիական պ. կառավարչապետի պաշտօնական կողմից,

Կ. ԿՈՒՍԻԿԵԱՆԻ և Լ. ՍԱՐԳՍԵԱՆԻ
„ՄԱՅՐԵՆԻ ԽՕՍՔ“
(3-րդ և 4-րդ տար.)
Ձեռնարկի 2-րդ տպագրութիւնը
համարված է պիտանի սկզբնական ուսումնարաններում գործադրելու համար։ 9—10

Լոյս տեսաւ
Տ. ԵԺԻ
ԼՈՒՍԱԴԻՄԻՆ,
Վէպը, երկրորդ տպագր.. գինն է 1 բուբլի։
Դիմել՝ Բաքու, Книжный маг. С. Д. Арутюнова. (ա. օ.) 12—25

Լոյս տեսաւ և ի ցոյց է դրված Կենտրոնական գրավաճառանոցում
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ
Իւղաներկ մեծադիր (96×68⁰) պատկերը, տպված Լայպցիգի Պինկաու նշանաւոր գործարանում 14 գոյնով։
Հրատ. Գիւտ ա. ք. Աղանեանի
Գինն է առանց ճանապարհածախսի 3 ր.
—
Մինչև պատկերների ստացվելը բացված է բաժանորդագրութիւն։ Ցանկացողները այժմէն կարող են 1 բուբլի, մնացեալը պատկերը ստանալիս։ Չ. ո. 6—10

ՄԻ ԿԻՆ տալիս է որդեգիր երկու տարեկան գեղեցիկ աղջիկ երեխայ և խնդրում է բարի մարդկանց ընդունել այն պատճառով, որ խեղճ են և մայրը տկար է։ Հասցէն Վօզնեսենսկայա փող. Տերասնի պերեուլ. № 73. տ. Խոյիրովի, բնակ. Վարդանեանի։
(Չ. ու. կ.) 2—3

Շարունակվում է ԱՂԲԻՒՐ ամսագրի և ՏԱՐԱԶ պատկերազարդ շաբաթաթերթի բաժանորդագրութիւնը։
ՏԱՐԱԶԻՆ կարելի է բաժանորդագրվել հոկտեմբերից մինչև յունվար, երեք ամսվայ համար ճանապարհածախսով ընդամենը 1 ր. 50 կ.
Դիմել՝ Тифлисъ. Редакція „ТАРАЗЪ“

ԳՈՒՏԵՆԲԵՐԳ
գրավաճառանոցում վաճառվում են.
Ерицовъ, Исторія холерной эпидемій въ Закавказьи, 20 к.
Вермишевъ, Матеріалы для исторіи грузино-армянскихъ отношеній. (Отвѣтъ на книжку Чавчавадзе), 1 р.
«Գալուստի և Շուշանիկի պսակվելը (Հարսանեկան պատկեր), 12 կ.։
Բաժանորդագրութիւն «Առողջապահիկ Թերթի», Վ. Արծրունու, 2 ր. 50 կ.։
Բաժանորդագրութիւն Դաղբաշեանի ռուս.-հայերէն բառարանի, 6 ր.
Նոյնի Հայերէն-ռուսերէն բառարանի, 4 ր.։
«Հայկական տպագրութ.», Լէօի, բ. տպ. 1 ր 20 կ.
«Դէպի Արարատ», Ա. Մխիթարեանի 40 կ.
«Դիտութիւն» պատկերազարդ ամսագիր, տարեկան 5 ր., իւրաքանչիւր համարը 50 կ.
«Երջանիկ իշխան»ը, թարգ. Լ. Բաբայեանի 15 կ.
«Խելօք աղջիկներ», Վ. Փափազեանի, 5 կ.
«Խոհք յուշիք», Պէրպէրեանի, ծախվում է յօգուտ Գալֆայեան աղջկանց որբանոցին Խասգիւղ, 1 ր.
«Նկարչի կեանքից» յիշողութ. Գ. Բաշինջ. 35 կ.
Шамшиньянъ, Элементарный курсъ черченія и переспективы, 60 к.
«Ինչպէս պահպանվել խոլերայից», 5 կ.
«Նոր պատկերազարդ աշխարհագրութիւն», բազմաթիւ քարտէզներով, Դ. Խաչիկոյի, 1 ր.
Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ "Гутенбергъ" (Дворцовая), Г. Галустяну. 2—2

Լոյս տեսաւ
ԱՐԱԲԻ
ՍՐԲԱԶԱՆ ԺԱՄԵՐ
(Բանաստեղծութիւններ)
Գինը՝ 20 կոպ.
Ծախվում է նոյն հեղինակի
ԳԵՐԲՆԱԿԱՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ
Պօէման
Գինը՝ 20 կոպ.
Հասցէն՝ Тифлисъ, Ртищевская 7а, Арташесу Абалянцъ կամ Книжный магазинъ «Гуттенбергъ». ե. հ. շ. կ. 3—6

Տնային Բժշկարան
Կազմեց ակադեմիկ Ի. Բ. Թարխանով, հայերէն թարգ. բժ. Գ. Ս. Բաբեանի խմբագրութեամբ և յաւելուածներով, ա. ա. Բնախօսութիւն և անդամակազմութիւն 104 պատ. գինը 1 ր., մ. ք. Վարակիչ հիւանդութիւններ, ներքին, կաշու և վենէրային, դեղարան և բառարան 1903 թ. գ. 1 ր. 60 կ.։ Գումարով գնողներին և հաստատութիւններին զիջումն կը լինի։ Դիմել Въ Тифлисъ, Центральной книжной торговлѣ. (կ.) 7—25

Բնական գիտութիւնների ֆակուլտէտը աւարտած ՄԻ ՀԱՅ ՏԻԿԻՆ
կամենում է դասեր ունենալ՝ առարկաներից և գլխաւորապէս ֆրանսերէնից։
Դիմել ժամը 11—3-ը
Вельяминовская, 19. (կ.) 6—10

ԿՐՕՆԻ ԴԱՄԱԳԻՐԵՐ
Ուսուցչաց համար

		Ր.	կ.	
1. Դասատուր կրօնի I տարի		—	25	250 գ.
2. » » II »		—	20	
3. » » III »		—	30	
4. Հին-ուխտ (ընդարձակ)	.	—	45	20% զեղչ
5. » (համառօտ)	.	—	35	
6. Նոր-ուխտ . .	.	—	40	
7. Գործք առաքելոց .	.	—	40	

Ուսուցչաց համար

8. Ուղեցոյց (մեթոդիկայ) հին-ուխտի . .	.	1	75
9. Ուղեցոյց (մեթոդիկայ) նոր-ուխտի . .	.	2	5
10. Ուսուցումն քրիստոնէական կրօնի Դ. .	.	1	50
11. Ուսուցումն քրիստոնէական կրօնի Ե. .	.	—	50

Ցանկացողները կարող են դիմել հետևեալ հասցէով.
1) Тифлисъ, священнику С. Саакянцъ, Коммерческое училище.
2) » Книжный магазинъ «Гуттенбергъ»
3) » » «Центральный».
—
Դասագրքերիս պահեստը գտնվում է պ. Ալէքսանդր Ամիրաղեանցի մօտ (Карвансарай Тамамшева, мануфактурный магазинъ А. Амирагова).
Ցանկացողները նրանից էլ կարող են պահանջ անել։
Սահակ քահ. Սահակեանց
յ.ա. օ. յլ.—օ. օր-մէջ ս. ա. օ. 54—66

Մամուլի տակ է
Սէյլանցի
«ՀԱՅԹԱ—ՖԻՐԱՏ»
պատմական վէպը մեր կեանքից։ 160—170 երեսից ոչ պակաս։ Խնդրվում է բաժանորդագիր ունեցող պարոններից մինչև դեկտեմբերի մէջը, ուղարկել բաժանորդագիրը հեղինակին, կամ Թիֆլիս՝ «Հէրմէս» տպարանը։
Տպագրվելուց յետոյ՝ գինն է 35 կոպէկ։
(Չ. կ.) 2—2

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
I
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
ռուսերէնից հայերէն
Լոյս տեսաւ ԵՕԹՆԵՐՈՐԴ պրակը, գինը ճանապարհածախսով 1 ր. 20 կոպ.։ Բառարանի բաժանորդագինն է ճանապարհածախսով 7 ր.
II
ԼԻԱԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ
Հայերէնից ռուսերէն
Եկող Նոյեմբերի 20 ին լոյս կը տեսնէ առաջին ստուար պրակը (200 եր.) և կարժենայ 1 ր. 50 կոպ.։ Բառարանի բաժանորդագինն է ճանապարհածախսով 5 ր., իսկ առաջին բառարանի բաժանորդների համար 4 ր.։ Օտարաքաղաքացիք և գաւառացիք պիտի ուղղակի ինձ դիմեն այս պարզ հասցէով. Тифлисъ, А. С. Дагбашяну. Թիֆլ. բաժ. գրվել կարելի է «Գուտենբերգ» գրախանութում։
(Կ. ե. հ. շ. կ.) 5—5

Բագուայ բաժանմունքում
«Պարապետի վրա»
Եղբայրք ՄԷԼԻՔ-ՄԱՐՈՒԹԵԱՆՑՆԵՐԻ
խանութում ստացվում է շարունակ մեծ քանակութեամբ ձմեռվայ տաք ֆուֆայկաներ. չուլիներ, ճասկիներ, երեխայի հագուստներ. նոյնպէս ստացվում է գլխի արքելումէ ապուխներ, չիլաներ, չիլի հաւիաներ և զանազան տեսակ գալանտերէյնի ապրանքներ։ Դրսի պատուէրները կատարվում են անմիջապէս։
(Կ. Չ.) 13—30

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԱՌԵՒՏՐԱԳԷՏ ԿՈՒՐՍԵՐ
Երկու սեռի անձանց համար
(Баку, Пречешная, домъ Теръ-Ованесова)
Կուրսերի նպատակն է տալ ուսկնգիրներին մասնագիտական, եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստաներ։ Կուրսերում ուսանվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն տրգիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։ Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայն օր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։
Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа)—տրվում և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспарову. 29—30
(Չ. կ.)

Дозволено цензурою. Тифлисъ, 30-го октября 1904 г. Ցպարան «ՀԵՐՄԷՍ» ԸՆԿ. Типогр. Т—ва С. Назарянца и К. п. ф. «ГЕРМЕСЪ». Мад. ул. № 15